թիւնից «մի քանի մետր հեռու, կողք կողքի կառուցուած են երկու եկեղեցիներ: Դրանք միջին մեծութեան բազիլիկներ են, որոնցից հարաւայինին կից է փոքրիկ գաւիթ-սրահը»[5]*: Տեղագրական երկերում այդ կառոյցը համարում էին լոկ Հասան-Ջալալեան իշխանատոհմի ապարանք*[6]*, սակայն արդէն Գարեգին Յովսէփեանն իրաւացիօրէն դիտարկել է այն Խօխանաբերդի ամրոց-բնակավայրի համալիրի մէջ*[7]*:*

Խօխանաբերդի անուան հիմքը յայտնի է դեռեւս Բիաինական պետութեան ժամանակներից: Ք. ա. 741 թ. արշաւանքի կապակցութեամբ այն յիշատակւում է Բիաինէլէի Սարդուրէ Բ արքայի՝ Գանձադռան սեպագիր տարեգրութեան մէջ իբրեւ Ուխունէ *երկրանուն: Վերջինիս տեղն, անկասկած, Խաչէնագետի հովտում էր, քանի որ նրանից առաջ նշուած* Կու-Ալբա *երկրանունը համապատասխանում է Տրտուի հովտի* Մեծ Կուանք *գաւառի անուանը, իսկ նրանից յետոյ նշուած* Տերիա *երկրանունը՝ Կարկառ գետի ձախակողմեան* Տրակետ *վտակի անուան հիմքին (աշխարհագրական Արցախի՝ նոյնպէս կենտրոնական* Պիանք *գաւառում)*[8]*: Իսկ* Խաչէն *անունն սկզբնապէս, ամենայն հաւանականութեամբ, կրում էր նոյնանուն գետի ափին գտնուող այն ամրոցը, որը շուտով դարձաւ Արցախի* Մեծ Իրանք *գաւառի իշխանների գլխաւոր նստավայրը:*

428 թ. Արշակունեաց թագաւորութիւնը վերացնելուց յետոյ Սասանեանները Հայաստանի հիւսիսարեւելեան Արցախ եւ Ուտիք նահանգները մտցրեցին Աղուանք (Առան) *մարզպանութեան կազմի մէջ: Նրանց փոխարինած արաբները պահպանեցին այդ վիճակը: Սակայն Խալիֆայութեան թուլացման դարաշրջանում Հայոց Արեւելից կողմերում ձեւաւորուեցին մի քանի հզօր իշխանութիւններ, որոնք Թ. դ. վերջին մաս կազմեցին Բագրատունեաց թագաւորութեան: Դրանցից մէկը* Խաչէնն *էր (Արցախ նահանգի կենտրոնական մասում), որի իշխանատոհմը սերում էր վաղ միջնադարում յայտնի* Ծաւդէացւոց *իշխանութիւնից, բայց արդէն որդեգրել էր ուրիշ ինքնանուանում՝* Առանշահիկներ*: 837 թ. Սահլ Սմբատեան խաչենցի իշխանը (որն արաբական աղբիւրներում կոչւում էր* Սահլ իբն Սինբաթ*, իսկ Միքայէլ Ասորու հայերէն թարգմանութեան մէջ՝* Սահակ Հայկազուն*[9]) լեռան վրայ գտնուող իր ամրոցում (հաւանաբար՝ հէնց* Խաչէն*) ձերբակալեց ապստամբ Բաբեկին եւ դրա դիմաց Արաբական խալիֆայութիւնից մեծ շնորհների արժանացաւ: Մասնաւորապէս նա ստացաւ Հայոց, Աղուանից եւ Վրաց աշխարհների իշխանաց իշխանի՝ ըստ ամենայնի, փոխան-*

5 **Շ. Մկրտչեան**, *Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական յուշարձանները*, էջ 20: Հմմտ. **Գ. Տէր-Յովհաննիսեանց**, նշ. աշխ., էջ 134 («Այս աւերակների մէջ է նոյնպէս Ջալալ մեծ իշխանի ընդարձակ պալատը, որ տեղացիներից կոչւում է Դարբասներ, եւ որոյ մէջ կառուցած է գեղեցիկ եկեղեցի - բայց այժմ կիսաւեր»):

6 **Մ. եպ. Բարխուտարեանց**, *Արցախ*, Բագու, 1895, էջ 181. **Հ. Ս. Էփրիկեան**, *Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան*, հտ. Ա, Վենետիկ-Ս.Ղազար, 1903, էջ 599:

7 **Գ. կաթ. Յովսէփեան**, *Խաղբակեանք կամ Պոռշեանք հայոց պատմութեան մէջ*, մասն I, Վաղարշապատ, 1928, էջ 317: Հայ միջնադարեան կենտրոնական բերդամրոցների շուրջ ձեւաւորուած ընդարձակ բնակավայրերի մասին տե՛ս **Ա. Զարեան**, *Ակնարկներ հին եւ միջնադարեան Հայաստանի քաղաքաշինութեան պատմութեան*, Եր., 1986, էջ 93-95, 113-120:

8 **Յ. Կարագեօզեան**, *Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիւրներում. Սեպագիր տեղանուններ (Այրարատում եւ յարակից նահանգներում)*, Եր., 1998, հտ. I,1, էջ 138-139, 200-201, 206. **Ա. Յակոբեան**, *Պատմա-աշխարհագրական եւ վիմագրագիտական հետազօտութիւններ (Արցախ եւ Ուտիք)*, Վիեննա-Եր., 2009, էջ 317-318, 404-405:

9 **Միքայէլ Ասորի**, *Ժամանակագրութիւն*, Երուսաղէմ, 1879, էջ 365: